ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

I

ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-21

Հրաչին Վարդանյան, *պ.գ.թ.*
Մարիամ Հակոբյան
ԵՊՀ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ
(ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան)[1]

Սփյուռքի նկատմամբ ՀՀ պետական քաղաքականության մշակման տեսանկյունից խիստ կարևոր են ինքնությանն առնչվող հարցերը: Իրենց սփյուռքների հանդեպ տարբեր պետությունների վարած քաղաքականության ուսումնասիրումը հետազոտողներին թույլ է տվել առանձնացնել քաղաքականության տարբեր տիպեր, որոնցից Հայաստան – Սփյուռք գործակցության երկարաժամկետ զարգացման, հեռահար արդյունավետության տեսանկյունից առավել ուշագրավ է քաղաքականության այն տեսակը, որի առանցքում սփյուռքաբնակների ինքնությունն է:

Չնայած Սփյուռքում ինքնության և դրա տարբեր բաղադրիչների հարցում առկա բազմաշերտությանը, ինքնությունն է այն հիմնական գործոնը, որ թույլ է տալիս աշխարհաքաղաքական վերադասավորումների ընթացքում վերաձևակերպել սեփական ազգային շահերը, առաջնահերթություններն ու օրակարգերը, մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներ: Արդի սփյուռքագիտական ուսումնասիրություններում հաճախ է ընդգծվում այն միտքը, որ ինքնությունն արդեն իսկ կայացած իրողություն համարելու փոխարեն՝ նախընտրելի է այն համարել «արտադրանք», որը մշտապես ստեղծվում և վերստեղծվում է նորովի՝ այդ թվում վերնախավերի ուղղորդմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հոդվածում խնդիր է դրված վեր հանելու, թե նոր ժամանակների հայկական երեք պետությունները՝ Հայաստանի առաջին, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի երրորդ հանրապետությունները, ինչպիսի քաղաքականություն են վարել Սփյուռքում ինքնության ուղղությամբ: Հոդվածը համեմատում և վերլուծում է այդ քաղաքականությունների բնույթը, մի շարք գործոններով պայմանավորված առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ ինքնություն, Սփյուռք, սփյուռքի քաղաքականություն, բազմազանություն, մշակութային կապեր, ռազմավարություն, էթնոազգային մշակույթ:

Ներածություն

Հենվելով պետություն–սփյուռք գործակցության միջազգային փորձի ուսումնասիրման վրա՝ հետազոտողներն առանձնացրել են քաղաքականու-

[1] Հետազոտությունն իրականացվել է Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի՝ 23-YSSS-013 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

թյան երեք հիմնական տիպեր: Դրանցից առաջինը գլխավորապես հենված է սփյուռքի *ռեսուրս*ը հայրենի պետության տնտեսական, անվտանգային, դիվանագիտական ոլորտներում, ինչպես նաև ետ-*կոնֆլիկտ*ային վերականգնման փուլում օգտագործելու վրա: Երկրորդ տեսակը միտված է *միգրացիա*ն բոլոր կողմերի՝ ծագման պետության, ընդունող պետության և *միգրանտ*ների համար շահավետ դարձնելուն: Երրորդ տեսակի հիմքում՝ «ինքնության քաղաքականություն»-ն է: Վերջինիս դեպքում պետությունը կենտրոնանում է ոչ թե նյութական շահերի, այլ գաղափարների և ինքնության վրա՝ բարձրացնելով սփյուռքի դերը ազգակերտման (*nation-building*) գործում: Ընդ որում, քաղաքականության այս տեսակը չի բացառում տնտեսական գործակցությունը, սակայն սփյուռքի նյութական փոխանցումների նշանակությունը չի մեկնաբանվում միայն տնտեսական առումով, այլ նաև՝ այն տեսանկյունից, որ սփյուռքում գտնվող անձինք դեպի հայրենիք նյութական *ռեսուրս*ներ են փոխանցում այն դեպքում, երբ իրենց նույնականացնում են տվյալ ազգի հետ, ուստի տնտեսական գործակցությունը, դրամահավաքը ստորադաս են և կախված՝ ինքնությունից ու նույնականացումից:

Հայրենի պետությունները հաճախ փորձում են սփյուռքը ներառել այն ազգաբնակչության մեջ, որը ներկայացնում և կառավարում են իրենք: Որոշ պետություններ փորձում են ազգային ինքնությունը ամրապնդել սփյուռքաբնակների մեջ մայրենի լեզվի և պատմության ուսուցման ծրագրերի, սփյուռքյան համայնքներում ազգային տոնակատարությունների և մշակութային իրադարձությունների կարևորման միջոցով: Հաճախ հիմնում են արտագաղթածներին թիրախավորող *մեդիա*, հանրային կապի միջոցներ՝ նպատակ ունենալով ստեղծելու համասեռ բնակչություն, ինչպես նաև սփյուռքը *մոբիլիզացնող* հատուկ ազդակներ ուղարկել, ինչպես օրինակ՝ վերադառնալ հայրենիք, գումար փոխանցել կամ արտերկրում հետամուտ լինել ազգային շահերի պաշտպանությանը: Այսպիսի քաղաքականության հիմնական նպատակը պետության կողմից արտերկրում բնակվողների շրջանում համայնքային մտածողության ձևավորումն է, *կոլեկտիվ* պատկանելության զգացումը՝ հայրենի պետության հանդեպ, որը նրանց կառավարելի է դարձնում:

Սփյուռքին պատկանելու *դիսկուրս*ը առանցքային նշանակություն ունի այս կառավարելի մտածողությունը ստեղծելու համար: Իսկ պետական կառույցների հիմնման քաղաքականությունը պետությանն օժտում է համակարգերով և հաստատություններով, որոնք հնարավորություն են տալիս «կառավարելու» սփյուռքաբնակներին: Շատ պետությունների պարագայում առաջին քայլը վերահսկողության իրականացումն է, վիճակագրական տվյալների հավաքագրումը, որի վրա էլ հենվում են սփյուռքի նկատմամբ ռազմավարական մոտեցումները, երկարաժամկետ հարաբերությունների կառուցումը[2]: Հաստատությունների հիմնումը պետություններին տալիս է *բյուրոկրատ*ական միջոցներ և համակարգ՝ մեծացնելու *գլոբալ* մակարդակում իրենց քաղաքական և տնտե-

[2] Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տես՝ Gonzalez 1999; Gamlen et al. 2019.

սական խուսանավումների հնարավորությունները, միևնույն ժամանակ այն թույլ է տալիս կառավարել տարածական առավել ցածր մակարդակները՝ ունենալով ներկայացուցիչներ առանձին համայնքներում, քաղաքներում[3]:

Նոր ժամանակների հայոց երեք պետությունների ստեղծած պետական կառույցների նպատակներն ու խնդիրները որոշակիորեն տարբերվել են միմյանցից: Այդ համատեքստում տարբեր են եղել նաև Սփյուռքում ինքնության ուղղությամբ իրականացված աշխատանքների ծավալն ու բովանդակությունը: Քաղաքականությունների վերոնշյալ բոլոր տիպերը այս կամ այն չափով առկա են եղել Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Ստորև կփորձենք վերլուծել, թե ինչպես է իրականացվել, մասնավորապես, ինքնության քաղաքականությունը:

Տեսական դիտարկումներ

Որպես սոցիալ-հոգեբանական բարդ երևույթ՝ ինքնությունը սփյուռքի պարագայում ստանում է լրացուցիչ բազմաշերտություն: Դա պայմանավորված է նրանով, որ այդ ինքնության հիմքում ընկած են ոչ միայն էթնիկ գիտակցությունը, այլև տիպիկ սփյուռքյան ինքնության ձևավորումը:

Առհասարակ, սփյուռքները կարող են ծագել և ձևավորվել առանց ինքնությունը հստակ ձևակերպելու, սակայն նրանց հետագա զարգացման համար առաջ է գալիս ինքնությունը պահպանելու անհրաժեշտություն, և այդ տեսանկյունից կարևոր է սփյուռքաբնակների՝ էթնոազգային ամբողջությանը պատկանելու գիտակցումը, դրա հետ նույնականացվելու գիտակցված ընտրությունը[4]:

Խմբի ինքնությունը սկզբնապես ձևավորված է լինում հայրենիքում, սակայն սփռումից հետո սփյուռքյան ինքնությունը հարմարեցվում է խմբերի կարիքներին՝ հաշվի առնելով ընդունող երկրի պայմանները: Այն հարմարեցվում է մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններին, ուստի սփյուռքները երբեմն ի հայտ են բերում նաև ինքնության *հիբրիդացում*: Նրանց ինքնությունները հենված են արյունակցական կապերի, ֆիզիկական հատկանիշների, լեզվի, պատմական հիշողությունների, ընդհանուր հետաքրքրությունների և մշակույթի վրա՝ ներառյալ կրոնական հավատալիքներն ու ծեսերը, իսկ այս բոլորն իրենց հերթին հենվում են որոշակի տարածքի հետ ամուր կապի վրա, որը ծագման երկիրն է՝ հայրենիքը: Վերջինս ավելին է, քան պարզապես էթնիկ խմբին պատկանող տարածքը: Այն սփյուռքաբնակների համար ունի զգացական կարևորություն: Այսպիսի տրամադրվածությունն անհրաժեշտ է խումբը *միգրանտ*ներից համախմբված սփյուռք դարձնելու համար[5]:

Սփյուռքները ժամանակի ընթացքում կարող են աճել, փոքրանալ, անհետանալ կամ ստեղծվել նորովի: Սփյուռքի գոյատևումը կախված է բազմաթիվ

---

3 Gamlen 2006, 10.

4 Sheffer 2003, 49.

5 Sheffer 2003, 100.

գործոններից՝ նրա չափից, ժամանակագրական առումով հին լինելուց, մշակութային գրավչությունից՝ համեմատած ընդունող հանրության հետ, ղեկավարության հեղինակությունից և արդյունավետության չափից, միասնության աստիճանից, կազմակերպություններից և հայրենիքի հետ հարաբերությունների բնույթից: Սփյուռքի հավաքական ինքնությունը և դրա երկարաժամկետ հեռանկարներն ավելի շատ կախված են ընդունող երկրի քաղաքական մթնոլորտից և ավելի փոքր չափով՝ հայրենիքում առկա պայմաններից[6]:

Ըստ այդմ, սփյուռքյան ինքնությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ համայնքը հարմարվում է այն երկրի պայմաններին, որում բնակվում է, կապ է հաստատում այլ վայրերում բնակություն հաստատած հայրենակիցների հետ՝ նպատակ ունենալով մեկտեղելու հավաքական ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը: Տարբեր երկրներում գտնվող համայնքների միջև ստեղծվող կապերը կարող են լինել տարբեր բնույթի՝ համայնքային, կրոնական, հանրային, քաղաքական, տնտեսական, ընտանեկան, կամ հիմնված լինել հայրենիքը կորցնելու ընդհանուր հիշողության վրա[7]:

Ինքնությունն արդեն իսկ կայացած փաստ համարելու փոխարեն՝ նախընտրելի է համարել «արտադրանք», որը երբեք ամբողջացված չէ և մշտապես ձևավորման ընթացքի մեջ է: Մշակութային ինքնությունը՝ ինչպես յուրաքանչյուր իրողություն, որն ունի պատմականություն, ենթակա է մշտական կերպափոխության: Հեռու լինելով անցյալի որևե հիմնարար կետից սկսած հավերժորեն *ֆիքսված* լինելուց՝ այն ենթակա է պատմության, մշակույթի և ուժի (իշխանության) շարունակական «խաղին»: Սփյուռքյան ինքնությունը մշտապես ստեղծվում և վերստեղծվում է նորովի: Սփյուռքի ինքնությանը միշտ չէ, որ բնորոշ է միատարրությունը. սփյուռքին կարող են բնորոշ լինել տարասեռությունը, բազմազանությունը, ինչպես նաև *հիբրիդացումը*: Այսինքն, ըստ անհրաժեշտության՝ ինքնությունը կարող է պահպանվել ոչ թե ի հակադրություն ընդունող երկրում առկա տարբերության, այլ վերջինիս հետ համադրվելով և *հիբրիդացմամբ*[8]:

Վերոնշյալի համատեքստում հայկական Սփյուռքի ինքնության խնդիրների շուրջ տեսական և համեմատական ուսումնասիրությունների կարևոր ամփոփումներ է կատարել սփյուռքագետ Վ. Սահակյանը՝ նշելով, որ ինչպես հրեական, այնպես էլ հայկական Սփյուռքի դեպքում ինքնությունը էթնիկ չէ, ազգային չէ, տոհմաբանական չէ, կրոնական չէ, այլ այս բոլորը *դիալեկտիկական* լարվածության մեջ են միմյանց հետ[9]: Ընդհանուր առմամբ, Սփյուռքի վերաբերյալ նա ընդգծել է.

1. **Հայրենակենտրոն և սփյուռքակենտրոն հայեցակարգեր**: Պատմականորեն Սփյուռքը բազմավայր կամ բազմակենտրոն է եղել, իսկ ժա-

6 Safran 2007, 157–160.
7 Թորոսյան և այլք 2017, 55:
8 Hall 1990, 222–237.
9 Սահակյան 2021:

մանակակից Սփյուռքը բաղկացած է ինչպես հայրենիքի (ընդհանուր առմամբ՝ ընկալվում է ՀՀ-ն), այնպես էլ սփյուռքյան տարբեր վայրերի շուրջ կենտրոնացած բնակչությունից: Նշված երկու հայեցակարգերը չեն բացառում մեկը մյուսին, և եթե հայրենակենտրոն հատվածները տարբեր ուղիներով ներգրավված են սփյուռքյան մշակույթի ձևավորման մեջ, ապա սփյուռքակենտրոն հատվածները կարող են այցելել հայրենիք, մասնակցություն ունենալ տարբեր ծրագրերի իրականացմանը: Երկու հայեցակարգերի հիմնական տարբերությունը հանգում է վերադարձի կամ հայրենադարձության գաղափարի շուրջ եղած տարբերություններին՝ այն իմաստով, որ հայրենակենտրոնության դեպքում վերադարձի գաղափարն ընդգծված է և կարող է տեղի ունենալ իրական հայրենադարձություն, սփյուռքակենտրոն հայեցակարգի դեպքում՝ վերադարձի կամ հայրենադարձության գաղափարն առկա չէ, և Սփյուռքն ընկալվում է որպես բնակության մշտական և արդյունավետ տարածք[10]:

2. **Էթնիկ պատկանելությունը, մշակութային զարգացումը և Սփյուռքը**: Տարբեր ժամանակներում Սփյուռքի որոշ համայնքներ դարձել են հայ մշակույթի զարգացման կարևոր կենտրոններ, ինչպես օրինակ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, որը վճռորոշ դեր ունեցավ 18-րդ դարի «Հայ մշակութային վերածննդի» շարժման համար, կամ՝ Կ.Պոլիսը և Թիֆլիսը 19-րդ դարում մշակութային այն կենտրոններն էին, որ նպաստեցին հայ գրական լեզվի արևմտյան և արևելյան ճյուղերի մշակմանը: Միաժամանակ, էթնիկ մշակույթի զարգացմանը նպաստելուց զատ, Սփյուռքում ի հայտ են եկել նաև մշակութային խառնուրդի և օտար ծագման հայկականության դրսևորումներ, ինչպես օրինակ՝ հայ-թուրքերեն հրատարակությունները, սփյուռքահայերի հրատարակած՝ հայկական թեմաներով անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլ լեզուներով գրականությունը, ևն[11]:
3. **Լեզուն և Սփյուռքը**: Սփյուռքում արևմտահայախոսների կողքին կան նաև անձինք, ում համար մայրենի լեզու են ընկալվում, օրինակ, ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը ևն: Նրանք կարող են որոշ չափով տիրապետել հայոց լեզվին կամ ընդհանրապես չխոսել հայերեն, սակայն որոշակի իրավիճակներում ցուցաբերել էթնիկ նույնականացում՝ որպես հայ, ըստ այդմ ֆինանսավորել, համալրել և ղեկավարել հայկական կազմակերպություններ, տեղական, ազգային, անդրազգային մակարդակներում նպաստել հայկական խնդիրների լուծմանը[12]:
4. **Կրոնը և Սփյուռքը**: Հայոց եկեղեցին ծառայել է որպես Սփյուռքում հայերի համարկման կարևոր օղակ, սակայն Սփյուռքի հայկականությունը

10 Սահակյան 2021:
11 Սահակյան 2021:
12 Սահակյան 2021:

երբեմն հատում է եկեղեցու և կրոնի սահմանները. չնայած սփյուռքահայերի մեծամասնությունը պատկանում է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուն, սակայն կան նաև կաթոլիկ և բողոքական, կրոնական այլ դավանանքների պատկանող հայեր[13]:

Սփյուռքի քաղաքականության առանձնահատկություններից է այն, որ քաղաքականությամբ զբաղվող անձինք կերտում և վերարտադրում են անդրազգային և քաղաքականացված ինքնություն՝ լինի դա ազգային, էթնիկ, թե կրոնական[14]:

Առհասարակ, *սփյուռք* երևույթը դիտարկվում է և՛ իբրև իրական սոցիալական կառույց, և՛ վերնախավային քաղաքական ծրագիր, սոցիալական շինվածք՝ համաձայն ազգայնականության վերաբերյալ Բ. Անդերսոնի հայտնի տեսության[15]: Գ. Շեֆֆերի մոտեցմամբ՝ սփյուռքյան ինքնությունը ներառում է *պրիմորդիալ*, *ինստրումենտալ* և հոգեբանական, *սիմվոլիկ* տարրեր: *Էթնոգենեզ*ի վերաբերյալ տեսություններից *պրիմորդիալիզմ*ը հենվում է կենսաբանական գործոնների, ֆիզիկական հատկանիշների՝ մաշկի գույնի, *ռասայական* պատկանելության և մշակութային որոշ *ատրիբուտ*ների վրա՝ պատմություն, լեզու, առասպելներ, խոհանոց, սովորույթներ, բանահյուսություն ևն: *Ինստրումենտալիստ*ական մոտեցման համաձայն՝ էթնիկ խմբի հետ նույնացումը և հավաքական ինքնության պահպանումը նպատակահարմար են գործնական անհատական և խմբային նպատակների հասնելու համար: Հոգեբանական և էթնոսիմվոլիկ մոտեցումների համաձայն՝ խմբի ինքնությունը հենվում է *սուբյեկտիվ* հոգեբանական գործոնների և *սիմվոլ*ների, առասպելներին ուժգին կապվածության վրա[16]:

Ըստ այսմ, երկու հիմնական պատճառ կա, թե ինչու են սփյուռքները ստեղծում կազմակերպություններ, ընդունող երկրի հանրության և կառավարության, հայրենիքի, *գլոբալ* և տարածաշրջանային դերակատարների, այլ երկրներում գտնվող իրենց հայրենակիցների հետ հարաբերությունները սնելու համար ներդնում զգալի ջանքեր և *ռեսուրս*ներ: Առաջին՝ նպաստել ընդունող երկրում իրենց համայնքի բարեկեցությանը և ապահովել նրա շարունակական գոյությունը: Երկրորդ՝ մեծացնել հայրենիքին և այլ երկրներում գտնվող իրենց հայրենակիցների համայնքներին աջակցելու կարողությունը[17]:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պարագան

Պատմության տարբեր շրջափուլերում Հայաստան-Սփյուռք հարաբերություններն ունեցել են զգալի տարբերություններ: Երբեմն էլ հարաբերու-

13 Սահակյան 2021:
14 Adamson 2012, 3.
15 Anderson 2006.
16 Scheffer 2003, 17–18.
17 Scheffer 2003, 26:

թյուններ, որպես այդպիսին, գրեթե գոյություն չեն ունեցել[18]: Հիմք ընդունելով անկախ պետականության գոյությունը՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համար առանձնացվել են երեք հիմնական շրջափուլեր՝ առաջին հանրապետության (1918–1920 թթ.), երկրորդ կամ Խորհրդային հանրապետության (1921–1991 թթ.) և երրորդ հանրապետության (1991-ից մինչ օրս)[19]:

Հայրենի պետության կողմից Սփյուռքի հավաքական պատկանելության զգացումը խթանելու քաղաքականություն կիրառվել է, մասնավորապես, Խորհրդային Հայաստանի և երրորդ հանրապետության տարիներին: Անշուշտ, խոսքն այստեղ միմյանցից տարբեր հանրային, քաղաքական, մշակութային պայմաններում իրականացված քաղաքականության մասին է, որը յուրաքանչյուր շրջանում ունեցել է բովանդակային զգալի առանձնահատկություններ:

Հայաստանի առաջին Հանրապետության կարճատև գոյության տարիներին՝ 1918–1920 թթ., գրեթե անհնար է խոսել համակարգված ինքնության քաղաքականության մասին: Պետության քաղաքական, սոցիալական և տնտեսական աղետալի իրադրությունը ստիպում էր կենտրոնանալ առավելապես կենցաղային խնդիրների վրա: Իշխանությունը փորձեց գաղթաշխարհի հայության հետ ամրապնդել կապերը, և *ինստիտուցիոնալ* առումով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համակարգումն ու իրականացումը վերապահվեց Արտաքին գործերի *մինիստրության* կազմում ստեղծված գաղութների բաժնին, սակայն վերջինիս առաջնային խնդիրը հայ գաղթավայրերի նյութական ու բարոյական *ռեսուրս*ները հօգուտ Հայաստանի օգտագործելն էր[20]:

Խորհրդային և երրորդ հանրապետության տարիներին որոշակի հնարավորություններ ստեղծվեցին՝ ուշադրություն դարձնելու նաև ինքնությանն առնչվող իրողություններին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրի սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրները ստիպում էին որպես Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամենաօրակարգային հարց դիտարկել Հայաստանի բնակչության սոցիալ-կենցաղային, պարենային խնդիրները: Ուստի 1921 թ. ստեղծված՝ Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեության հիմնական առանցքը, հատկապես գործունեության առաջին տարիներին, Հայաստանի բնակչության համար Սփյուռքի նյութական օժանդակություն կազմակերպելն էր[21]: Սակայն գաղափարական առումով այն իրականացրեց շատ կարևոր առաքելություն՝ համախմբեց սփռված հայությանը Հայաստանի օգնության գաղափարի շուրջ և կապեց տվյալ պահին գոյություն ունեցող պետության՝ Խորհրդային Հայաստանի հետ:

Խորհրդային Միության ընդհանուր քաղաքական իրավիճակը, իրականացվող բոնաճնշումներն իրենց ազդեցությունն ունեցան նաև ՀՕԿ-ի գործու-

18 Հովհաննիսյան 2016:
19 Եղիազարյան և այլք 2017, 30–31:
20 Եղիազարյան և այլք 2017, 46:
21 Եղիազարյան և այլք 2017, 68–71:

նեության վրա: 1937 թ. ՀՕԿ-ը լուծարվեց՝ որակվելով որպես օտարերկրյա գործակալների և լրտեսների կազմակերպություն, իսկ նրա ղեկավարները բռնադատվեցին՝ ձերբակալվեցին և հիմնականում գնդակահարվեցին[22]:

1937 թ. Խորհրդային Հայաստանում Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության դադարեցումից հետո միաժամանակ, փաստորեն, Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև հարաբերություններ գոյություն չունեին: Այս շրջանում Սփյուռքում, ավանդական կառույցներից բացի, ինքնության հարցում մեծանում է նաև Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու սփյուռքյան թեմերի դերակատարումը, և նկատվում է եկեղեցու աշխարհիկ դերի դրսևորում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված իրականության պայմաններում, հաշվի առնելով նաև պատերազմի ընթացքում սփյուռքահայության աջակցությունը, խորհրդային իշխանությունը 1944 թ. Սփյուռքի հետ հարաբերությունները համակարգելու համար հիմնեց նոր կառույց՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը՝ ՄԿՀԸ/АОКС-ը[23]:

Թեև կառույցն ուներ ակնհայտ քաղաքական նպատակ՝ արտերկրում խորհրդային կարգերի քարոզչությունը[24], բայց և այնպես այն կրթամշակութային դաշտում իրականացնում էր փոխայցելությունների կազմակերպում, գաղթօջախներին տարաբնույթ գրականություն և ճանաչողական նյութերի առաքում՝ գրքեր, պարբերականներ, ձայնապնակներ, լուսանկարներ, կինոֆիլմեր, ուղեցույցներ ևն, Հայաստանի բուհերում և այլ ուսումնական հաստատություններում սփյուռքահայերի ուսումնառության, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, Սփյուռքի դպրոցներին դասագրքերի, լաբորատոր և այլ սարքավորումների տրամադրում, հայրենիքում սփյուռքահայ պատանիների ու երիտասարդների ամառային հանգստի կազմակերպում ևն[25]:

Հիմնվելով ՄԿՀԸ գործունեության արդյունքների վրա՝ Հայրենիք–Սփյուռք կապերը որակապես նոր մակարդակի բարձրացնելու համար 1964 թ. Հայկական ԽՍՀ իշխանությունը հիմնեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ ՍՀՄԿԿ-ն[26]: Այն՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերության՝ «Ռոդինա»-ի կոլեկտիվ անդամ էր, նպատակ ուներ՝ 1) հաստատել և զարգացնել կապերը սփյուռքահայ

22 Եղիազարյան և այլք 2017, 82–84:

23 Եղիազարյան և այլք 2017, 91:

24 Նշենք, որ Խորհրդային Միության գաղափարական, քաղաքական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները սփյուռքի հայկական կազմակերպությունները բաժանում էին երկու խմբի՝ 1) առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ), 2) ռեակցիոն կամ հետադիմական (դաշնակցականներ): Ուստի՝ հարաբերությունները կառուցվում էին առաջին խմբի կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

25 Եղիազարյան և այլք 2017, 93–98:

26 Եղիազարյան և այլք 2017, 102:

գաղթօջախների հետ, 2) գաղթօջախների հայությանը ծանոթացնել Հայրենիքի կյանքին, ձեռքբերումներին, գիտությանը և մշակույթին, 3) գաղթօջախների հայության մեջ սերմանել հայրենասիրություն, 4) ՀԽՍՀ-ի աշխատավորներին ծանոթացնել գաղթօջախների առաջադիմական կազմակերպությունների, ձուլման դեմ պայքարի և Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների հետ[27]:

ՍՀՄԿԿ-ն, ընդհանուր առմամբ գործելով Խորհրդային Միության հատուկ ծառայությունների հետ գործակցաբար, այդուհանդերձ հայապահպանության ուղղությամբ իրականացնում էր զգալի աշխատանք՝ հիմնականում այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսիք արդեն թվարկել ենք ՄԿՀԸ-ի պարագայում: ՍՀՄԿԿ գործունեությունը մեծապես կապված էր Խորհրդային Միության գաղափարաքաղաքական իրողություններին և արտաքին քաղաքականությանը: Հայաստան–Սփյուռք հարաբերությունների պատմության ընթացքում սա մի ժամանակահատված էր, երբ հիմնականում Հայրենիքն էր Սփյուռքին ուղղում որոշակի միջոցներ, այլ ոչ թե Սփյուռքից ակնկալում օգնություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի անկախացումը նոր էջ բացեց Հայաստան–Սփյուռք փոխհարաբերություններում, ստեղծվեցին Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ, մի շարք պետական գործիքներ և ձևաչափեր, որոնցով պետք է իրականացվեր ՀՀ պաշտոնական քաղաքականությունը Սփյուռքի հանդեպ[28]:

1996 թ. ՀՀ Կառավարության կազմում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանում, որոշ ժամանակ անց ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում ձևավորվեց գործակալություն, 2000 թ.՝ Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն, որը 2002 թ. վերակազմավորվեց որպես գործակալություն, իսկ 2008 թ. ապրիլից՝ Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտե[29]: Հայաստան–Սփյուռք հարաբերություններն ու համագործակցությունը *ինստիտուցիոնալ* առումով նոր մակարդակի վրա դնելու տեսանկյունից կարևոր քայլ էր 2008 թ. ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը, որը միտված էր Սփյուռքի հետ հարաբերությունները կառուցելու փոխըմբռնման, փոխվստահության և գործընկերության սկզբունքների հիման վրա[30]: Սկսած 2019-ից՝ Սփյուռքի հանդեպ Հայաստանի պետական քաղաքականության իրականացումը և գործակցության ապահովումը վերապահվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին:

Հայապահպանության ուղղությամբ ՀՀ Սփյուռքի նախարարությունը ևս կազմակերպել է սփյուռքահայ ուսուցիչների, կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցներ, համայնքներին տրամադրել գրականություն, դասագրքեր և նյութական ու մեթոդական օգնություն է ցուցաբերել

27 Եղիազարյան և այլք 2017, 103–104:
28 Հովհաննիսյան 2016:
29 Մինասյան 2018, 30:
30 Թորոսյան և այլք 2017, 162:

Սփյուռքի դպրոցներին, կազմակերպել երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագիրը: Համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորման և զարգացման նպատակով սերտ կապեր են ստեղծվել սփյուռքյան լրատվական կառույցների հետ, ստեղծվել են հեռուստաֆիլմեր («Իմ Հայաստան», «Ախալցխա» ևն), հեռուստածրագրեր («Սփյուռքի ժամ» «Բարի գիշեր, հայեր», «Հայլուր Սփյուռք», «Մեր մեծերը» ևն), տեղեկատվական ֆիլմեր, հոլովակներ, հիմնվել է «Հայերն այսօր» ամենօրյա բազմալեզու էլեկտրոնային պարբերականը, կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, մշակութային, կրթական տարբեր միջոցառումներ ևն[31]:

Եզրահանգումներ

Այսպիսով, Հայաստան–Սփյուռք հարաբերությունների պատմության ընթացքում ինքնության ուղղությամբ իրականացված աշխատանքները հիմնականում եղել են ձուլման դեմ պայքարի, հայապահպանության մակարդակում, այլ ոչ թե կրել են ինքնություն կերտելու գործընթաց:

Սփյուռքը, իր ձևավորման փուլից սկսած, մի շարք հարցերում գործել է ինքնակազմակերպման ճանապարհով: Տասնամյակների ընթացքում հայապահպանության ուղղությամբ իրականացվել է զգալի աշխատանք, իսկ հայկական պետության գոյության պայմաններում Սփյուռքում հայապահպանությանը նպաստել է նաև պետությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի անկախացումը ստեղծեց Սփյուռքի հետ նոր որակի հարաբերություններ կառուցելու բոլոր հնարավորությունները, սակայն մասնավորապես՝ ինքնության ուղղությամբ աշխատանքներն իրենց բնույթով մնացին նույն մակարդակում:

Ստեղծված իրավիճակը հանգեցրել է նրան, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում ինքնության ուղղությամբ նոր որակի քաղաքականություն որդեգրելու անհրաժեշտություն է առաջացել: Ընդ որում, խոսքը միայն պետության իրականացրած քաղաքականության մասին չէ, այլև՝ սփյուռքյան կազմակերպությունների: ՀՀ-ում և Սփյուռքում ազգի ստեղծագործ փոքրամասնությունը (*էլիտա*) իր առաքելությունը պետք է իրականացնի՝ ընդունելով Հայոց պետության և Սփյուռքի ներկա իրավիճակին, տարածաշրջանային և *գլոբալ* զարգացումներին համարժեք գաղափարների, արժեքների, աշխարհում հայության պատշաճ դիրքավորման և ապագային միտված ծրագրերի մշակման մարտահրավերը:

Հապավումներ

ՀՕԿ	Հայաստանի օգնության կոմիտե
ՄԿՀԸ	Մշակութային կապի հայկական ընկերություն
ՍՀՄԿԿ	Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե

31 Հակոբյան 2017, 431:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ և այլք 2017
Եղիազարյան Ա.Ս., Անանյան Մ.Մ., Հայրենիք–սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 244 էջ:

ԹՈՐՈՍՅԱՆ և այլք 2017
Թորոսյան Տ.Ս., Սարադյան Մ., Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2017, 183 էջ:

ՀԱԿՈԲՅԱՆ 2017
Հակոբյան Հ.Հ., Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, հեղինակային հրատ., 2017, 662 էջ:

ՄԻՆԱՍՅԱՆ 2013
Մինասյան Է.Գ., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:

ՄԻՆԱՍՅԱՆ 2013
Մինասյան Է.Գ., Հայրենիք–Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001–2017 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 446 էջ:

ՍԱՀԱԿՅԱՆ 2021
Սահակյան Վ.Է., Սփյուռքի կոնցեպտուալացումն ու Սփյուռքի իրողությունները. նախնական դիտարկումներ // EVN Report համացանցային պարբերական, 2021 (մայիսի 27) https://evnreport.com/arm/magazine-issues/diaspora-conceptualizations-and-the-realities-of-the-armenian-diaspora/ (դիտումը՝ 22.04.2024):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2016
Հովհաննիսյան Է.Գ., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացումը 2008–2016 թվականներին // «21-րդ ԴԱՐ», 2016, № 6 (70), 25–41.

ADAMSON 2012
Adamson F., Constructing the Diaspora: Diaspora Identity Politics and Transnational Social Movements, Politics from Afar // Transnational Diasporas and Networks (eds. T. Lyons, P. Mandaville), Columbia University Press, 2012, 25–42.

ANDERSON 2006
Anderson B., Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London, Verso, 2006, 256 p.

ESMAN 2009
Esman M., Diasporas in the Contemporary World, Cambridge, Polity Press, 2009, 210 p.

GAMLEN 2006
Gamlen A., Diaspora Engagement Policies: What Are They and What Kinds of States Use Them, University of Oxford, 2006, № 32, 31p.

GAMLEN et al. 2019
Gamlen A., Cummings M., Vaaler P., Rossouw L., Explaining the Rise of Diaspora Institutions // Journal of Ethnic and Migration Studies, 2019, № 45/4, 492–516.

GONZALEZ 1993
Gonzalez C., The Mexican Diaspora in California: The Limits and Possibilities of the Mexican Government // The California-Mexico Connection (eds. A. Lowenthal, K. Burgess), Stanford, Stanford University Press, 1993, 221–235.

GONZALEZ 1999
Gonzalez C., Fostering Identities: Mexico's Relations With its Diaspora // Journal of American History, Organization of American Historians, 1999, № 86/2, 545–567.

HALL 1990
Hall S., Cultural Identity and Diaspora // Identity: Community, Culture, Difference (ed. J. Rutherford), London, 1990, 222–237.

SAFRAN 2007
Safran W., Democracy, Pluralism and Diaspora Identity: An Ambiguous Relationship // Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity (ed. G. Tototicaguena), Reno, University of Nevada, 2007, 157-185.

SHEFFER 2003
Sheffer G., Diaspora Politics. At Home Abroad, New York, Cambridge University Press, 2003, 290 p.

SHEFFER 2007
Sheffer G., The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges // Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-Level Politics of Diaspora and Transnational Identity (ed. G. Tototicaguena), Reno, University of Nevada, 2007, 187–214.

Hratsin V. Vardanyan, *Ph.D.*
Mariam M. Hakobyan
Yerevan State University

THE POLICY OF IDENTITY AS A COMPONENT OF STATE-DIASPORA COOPERATION (the Case of RA – Diaspora Relations)

***Keywords*:** identity, Diaspora, diaspora politics, diversity, cultural ties, strategy, ethno-national culture.

Researchers have identified different types of policies that states conduct toward their diasporas. Among these policies, the most significant one for the long-term development and effectiveness of Armenia-Diaspora cooperation is the type of policy based on the identity of the Diaspora. The article aims to illuminate, compare, and explain the policies implemented by the three Armenian republics: the first Republic of Armenia, Soviet Armenia, and the third Republic of Armenia, regarding identity in the Armenian Diaspora. In the state administration systems of the three Armenian republics, structures were working with the Diaspora. However, the goals, objectives, scope, and nature of the work on identity were somewhat different. During the short-lived first RA, in challenging socio-economic circumstances, the primary focus of the government was to utilize the resources of the Diaspora to support the needs of RA, so no systematic effort was made towards establishing an identity. In both Soviet Armenia and the third RA, efforts were made to reflect on issues related to identity, although the approach differed significantly in each era. In Soviet Armenia, this reflection became more pronounced after World War II, as the government worked to build ties with the Diaspora and focused on preserving Armenian identity. After Armenia gained independence, new development opportunities emerged with the Diaspora. As a result, many initiatives were implemented, but the efforts towards identity remained at the same level. Despite having specific differences compared to the Soviet period, these efforts primarily aimed to combat assimilation and preserve identity rather than construct an identity.

***Грацин Вардановна Варданян**, к.и.н.*
Мариам Мишаевна Акопян
Ереванский государственный университет

ПОЛИТИКА ИДЕНТИЧНОСТИ КАК СОСТАВЛЯЮЩАЯ СОТРУДНИЧЕСТВА ГОСУДАРСТВА С ДИАСПОРОЙ (на примере отношений РА – Диаспора)

***Ключевые слова*:** идентичность, Диаспора, диаспоральная политика, многообразие, культурные связи, стратегия, этнонациональная культура.

Изучение политики, проводимой рядом государств по отношению к своим диаспорам, позволило исследователям выделить разные типы политики. С точки зрения долгосрочного развития и долгосрочной эффективности сотрудничества РА – Диаспора, наиболее примечательным является тип политики, основанный на особенностях идентичности представителей Диаспоры. В статье предпринята попытка выделить, сравнить и проанализировать, – какую политику осуществляли три армянские республики: первая РА, Советская Армения и третья РА в направлении идентичности в Диаспоре. В системе государственного управления трех армянских республик существовали структуры, работающие с Диаспорой, цели и задачи которых, объем и характер работы над идентичностью несколько отличались друг от друга. В годы Советской Армении и третьей РА, несмотря на существенные различия по содержанию, были созданы благоприятные условия для размышлений о реалиях, связанных с идентичностью. В Советской Армении этот процесс стал более очевидным после Второй мировой войны, когда процесс построения отношений с Диаспорой сопровождался деятельностью по сохранению идентичности. После обретения Арменией независимости, были созданы совершенно новые возможности для развития взаимоотношений с армянской Диаспорой, в результате чего был реализован ряд инициатив, однако, в частности, работа в области политики идентичности осталась на прежнем уровне. Несмотря на определенные особенности по сравнению с советским периодом, эти попытки в основном имели цель борьбы с ассимиляцией, сохранения идентичности.

Ներկայացվել է՝ 10.02.2025,
գրախոսվել է՝ 17.05.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7